Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 29-ի նիստի N 28
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմինները	Համակատարող	Կատարման ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7
1.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1528–Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սույն ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ ակնկալվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության նպատակների, խնդիրների հստակեցում, գործառույթների նորովի սահմանում, այդ թվում սեյսմիկ պաշտպանության ծառայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ դրույթների սահմանում, համակարգի կազմակերպչական հիմնախնդիրների լուծում: Արդյունքում ՀՀ կառավարության որոշումը կհամապատասխանեցվի «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-53-Ն օրենքին:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	-	2017թ. հոկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետ, 14-րդ կետի 1-ին ենթակետ, 23-րդ կետի 2-րդ ենթակետ, 46-րդ կետ, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 3-ի 1-ին կետ

2.«Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի N 392 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում տեղի ունեցած փոփոխություններն անհրաժեշտություն են առաջացրել նաև փոփոխություններ կատարել ներկայացված ՀՀ կառավարության որոշումներում: Արդյունքում ծրագիրը կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության օրենքներում և այլ իրավական ակտերում տեղի ունեցած փոփոխություններին: Կլրացվեն ծրագրի կատարման արդյունավետության բարձրացմանն առնչվող պահանջներ, մոտեցումներ: Կհստակեցվեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության առարկաները:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Երևանի քաղաքապետարան *(համաձայնությամբ)*, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ), Հայկական	2018թ. մարտ	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 3-րդ,5-րդ ենթակետեր, 16-րդ կետի 12-րդ,13-րդ, 14-րդ ենթակետեր, 23-րդ կետի 2-րդ ենթակետ, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 3-ի 1-ին կետ, հոդված 6-ի 1-ին և 2-րդ կետեր, հոդված 11-ի 1-ին կետի 3-րդ ենթակետ

			ատոմային էլեկտրակայան (համաձայնությամբ)			
3.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351–Ն որոշումը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	նոր խմբագրությամբ ՀՀ կառավարության որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրությամբ հաստատված հայեցակարգով նախատեսված դրույթների ներառում, մասնավորապես՝ *1)* սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման քաղաքականության մասով, *2)* լուծում պահանջող հիմնախնդիրների մասով, *3)* սեյսմիկ ռիսկի նվազեցման ռազմավարության մասով:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	2018թ. հուլիս	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված հավելվածի հայեցակարգի 2-րդ կետի 9-րդ ենթակետ, 13-րդ կետ, 14-րդ կետի 6-րդ, 8-րդ ենթակետեր, 20-րդ կետի 8-րդ ենթակետ, 23-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետեր, 24-րդ կետի 3-րդ, 14-րդ ենթակետեր, 40-րդ կետի 6-րդ, 7-րդ ենթակետեր, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 3-ի 1-ին կետ, հոդված 21-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետեր
4.«Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման ռազմավարությունը հաստա-	Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է սեյսմիկ ռիսկի գնահատման քաղաքականության մշակման, մեխանիզմների և կարողությունների զարգացումն ու	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ էներգետիկ	2019թ. հուլիս	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-

տելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկա-յացնելը	ամրապնդումը, իրավական, կազմակերպական և տեխնիկական հիմնախնդիրների լուծման ուղիների նախանշումը: «Տեղական ինքնակառավարման մասին» և «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում տեղական ինքնակառավարման մարմիններին տրված սեյսմիկ պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունները կարտացոլվեն սույն որոշման մեջ:		ենթակառուց-վածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կառավարու-թյանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ առողջապա-հության նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՀՀ բնապահպա-նության նախարարություն, ՀՀ գյուղատնտե-սության նախարարություն			ին կետով հաս-տատված հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետ, 16-րդ կետի 1-ին, 14-րդ, 15-րդ ենթակետեր, 23-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետեր, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 5-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետ
5. «Արտաշատ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության գնահատման պիլոտային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկա-յացնելը	Ծրագրի կատարման արդյունքում ակնկալվում է Արտաշատ քաղաքի սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների առաջին փուլի համակարգված իրականացում սեյսմիկ պաշտպանության տեսակետից կա-րևոր նշանակության՝ բազմաբնակա-րան բնակելի շենքերի համար:Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա գնահատելու Արտաշատ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիությունը՝ ըստ ժամանակացույցի:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարու-թյուն, ՀՀ Արարատի մարզպետարան	2019թ. դեկտեմբեր	Ֆինանսա-վորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաս-տատված հավելվածի 14-րդ կետի 5-րդ, 8-րդ ենթակետեր, 16-րդ կետի 2-րդ, 12-րդ, 15-րդ ենթակետեր,

	Բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումը և սեյսմիկ ռիսկի նվազեցումը պահանջում են շենքերի և շինությունների մանրակրկիտ հետազննում, որը հանդիսանում է նախնական փուլ սոցիալական և տնտեսական տեսանկյունից ընդունելի սեյսմակայունության մակարդակ ապահովելու համար:					20-րդ կետի 6-րդ ենթակետ, 24-րդ կետի 14-րդ ենթակետ, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 23-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետ, հոդված 24
6.«Հայաստանի Հանրապետության բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների նախապատրաստման համար ուժեղ երկրաշարժի վերաբերյալ բազմակողմանի ուսուցողական ծրագրերի մշակման և ներդրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սեյսմիկ ռիսկի նվազեցման կարևորագույն խնդիրներից մեկը բնակչության տարբեր խմբերի և կառավարման մարմինների իրազեկության բարձրացումը և սեյսմապաշտպանության վարքականոնների ուսուցումն է: Պետական համալիր ծրագրերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրության են արժանանում բնակչության տարբեր տարիքային խմբերի ուսուցման կազմակերպման և անցկացման աշխատանքները՝ որպես սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների կարևոր փուլ:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2020թ. հուլիս	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաստատված հայեցակարգի 13-րդ կետ, 14-րդ կետի 9-րդ ենթակետ, 16-րդ կետի 4-րդ, 5-րդ ենթակետեր, 18-րդ կետի 1-ին, 4-րդ ենթակետեր, 19-րդ կետ, 20-րդ կետի 4-րդ, 5-րդ ենթակետեր, 23-րդ կետի 2-րդ, 23-րդ ենթակետեր, 24-րդ կետի 16-րդ ենթակետ 40-րդ կետի 2-րդ, 12-րդ ենթակետեր, «Սեյսմիկ պաշտպանության

						մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 22-ի 1-ին կետի 2-րդ ենթակետ, հոդված 25
7.«Հայաստանի Հան-րապետության պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումը և սեյսմիկ ռիսկի նվազեցումը պահանջում են գոյություն ունեցող ջրամբարների պատվարների մանրակրկիտ հետազննում, որը հանդիսանում է նախնական փուլ սոցիալական և տնտեսական տեսանկյունից ընդունելի սեյսմակայունության մակարդակ ապահովելու համար: Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու պետական հատուկ նշանակության ջրամբարների **պատվարների** սեյսմիկ վտանգի ու սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	2021թ. հուլիս	Ֆինանսա-վորում չի պահանջում	ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի ՆԿ-140-Ն կարգադրության 1-ին կետով հաս-տատված հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետ, 16-րդ կետի 2-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետեր, 20-րդ կետի 6-րդ ենթակետ, 23-րդ կետի 2-րդ ենթակետ, 24-րդ կետի 14-րդ ենթակետ, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 23-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետ, հոդված 24